

Նորա կերպարանքը, այլ ամենափոքր շարժմունքը. աչքերն այդ արտաքոյ կարգի սեւութիւնը եւ գեղեցկութիւնը պահած էին անփոփոխ, երկայն թարթիչները այնպիսի բնական քօղ մը ձգած էին այդ աչաց վրայ, անպատմելի քաղցրութիւն մը կ'ուտային իւր նայուածքին. արեւը տկար ճառագայթներ կ'արձկէր խրիսուպոլսոյ կը սղմեն եւրոպական ծովեզրին վրայ, ծովը հանդարտ լիճ մ'էր, եւ Արփենի նստած այդ գեղեցիկ տեսարանին կը նայէր: Չաւէն տեսաւ, որ աղջկան աչքերը լցուեցան եւ այդ առանձնութեան մէջ իբրեւ մեծ մարդ խորհրդածելով արցունք կը թափէր: Այդ արցունքը ծերուն սիրտը ոչ տխրութեամբ՝ այլ ուրախութեամբ լցուց. ուստի ելաւ սիրտը թունդ իւր բնակարանէն եւ սկսաւ մօտենալ ծովեզրին:

Արփենի աչքը սրբեց եւ դարձուց դէպի ծերը. իսկ սա աւելի մօտենալով, քաղցրութեամբ եւ հայերէն

– Չիս կը ճանչե՞ս, Արփենի,– հարցուց:

Երկայն լռութիւն մը յաջորդեց այս հարցմունքին, աղջիկն անշարժ ծերուն երեսը կը նայէր. կարծես թէ այդ պշումին մէջ յիշատակութիւնը կ'ուզար ոչ միայն դիմացինին կերպարանաց՝ այլեւ լեզուին, որ չորս երկայն տարիներ ոչ խօսած էր, ոչ լսած: Եւ ահա տխուր ծիծաղ մը եկաւ այդ երեսին, եւ ծանր, հատիկ-հատիկ՝

– Չաւէն հայրիկ, դո՞ւ ես,– ըսաւ Արփենիի քաղցրիկ ձայնը:

Այս չորս բառերուն մէջ՝ զրուցուած եղանակին ու ձեւին եւ այդ անշարժութեան մէջ այնպիսի անբացատրելի բան մը կար, որ ծերուն սիրտը տրորեց եւ աչքերն արտասուքով լցուեցան. այդ բոլորը կը զրուցէին իրեն, որ այդ աղջիկը կ'իմանար թէ որք էր, թէ պանդուխտ էր, թէ թշնամեաց ձեռք գերի էր, թէ անպաշտպան էր, փրկութեան յոյս չունէր, եւ այս ամէնքը դեռ տասնմէկերորդ տարիքին մէջ: Ուստի ծերը մօտեցաւ.

– Սիրուն Արփենի, ինչպե՞ս մեծցեր ես, ինչպե՞ս գեղեցիկ ես:

Դարձեալ պատասխան չիկար. նոյն նայուածքն էր. իբրեւ թէ տղան բան մը կը փնտրէր, փնտրածը լեզուն էր. բառերը խառնակ կ'ուզային իր յիշողութեան մէջ, եւ վերջապէս դարձաւ ըսաւ. «Չաւէն հայրիկ» եւ մնացածը յունարէն.

– Ինչչա՞փ ժամանակ է, որ ես այստեղ եմ, եւ դու ո՞ւր ես. ես մէկը չունիմ, ամէնքը հայր, մայր, եղբայր, քոյր ունին, ես ոչ ոք, բայց կը յիշեմ թէ ունէի.